# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2021թ. N 27-Ա

## ՌԱԻՍԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ռաիսա Առաքելյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.Ռաիսա Առաքելյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43077355) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենքի մոտ հասցեում գտնվող 65 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 22
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2021թ. N 28-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի հոկտեմբերի 12-ին տրված Ար-1876 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրն ու Սեդա Սամվելի Սարդարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 17 տեղամասի թիվ 19 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11 փողոց փողոց 19:

2.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող Տիգրան Լևոնյան անհատ ձեռնարկատիրոջ տված՝ Սեդա Սամվելի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 11 փողոց 19 (ծածկագիր՝ 07-051-0141-0022) հասցեի 0.043614 հեկտար մակերեսով վերոնշյալ հողամասի հատակագիծը:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 22
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2021թ. N 29-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՄՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ անամնաշենքը կառուցված չի ու չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 10-ին տրված Ար-2267 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունն ու Վաչագան Միխայիլի Վարտանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 4-րդ շարքի հ. 19 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 4-րդ փողոց 19:

2.Վաչագան Միխայիլի Վարտանյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 4-րդ փողոց 19 (ծածկագիր՝ 07-003-0043-0012) հասցեի բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման 0.05 հեկտար մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 64.94 քմ արտաքին (53.3 քմ ներքին) մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական:

3.Վաչագան Միխայիլի Վարտանյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 136374 (մեկ հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր յոթանասունչորս) դրամ՝ 64.94 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի օրինականացման վճար:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված վերոնշյալ 0.05 հեկտար մակերեսով հողամասի ու շինության հատակագիծը:

6.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановленная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 22
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2021թ. N 30-Ա

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և 11-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված գնումները կատարելու համար սահմանել պատասխանատու ստորաբաժանումներ՝

1) շինարարական աշխատանքների գնման պատասխանատու ստորաբաժանում.

2) ապրանքների և ծառայությունների գնման պատասխանատու ստորաբաժանում.

3)համակարգչային տեխնիկայի և սարքավորումների գնման պատասխանատու ստորաբաժանում:

2.Շինարարական աշխատանքների գնման պատասխանատու ստորաբաժանման ղեկավարներ նշանակել Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ ***Հայկ Եղյանին*** և համայնքի ղեկավարի խորհրդական ***Միշա Եղիազարյանին***:

3.Ապրանքների և ծառայությունների գնման պատասխանատու ստորաբաժանման ղեկավար նշանակել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ ***Վոլոդյա Հայրապետյանին***:

4.Համակարգչային տեխնիկայի և սարքավորումների գնման պատասխանատու ստորաբաժանման ղեկավար նշանակել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համակարգիչների, ցանցի և ծրագրերի սպասարկող ***Խաչատուր Գաբրիելյանին***:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Փաստորմավորված подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 25
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 հունվարի 2021թ. N 31-Ա

### ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
### (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Անդրանիկ Միշայի Զորանյանի հայտը ՝ ***որոշում եմ.***

1.Անդրանիկ Միշայի Զորանյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7/55/2 (ծածկագիր՝ 07-003-0048-0021, վկայական N 26082020-07-0126) հասցեի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գոյություն ունեցող, գրանցված 67.57 քմ մակերեսով խոհանոցին և 617.23 քմ մակերեսով բնակելի տանը կից հարթակներ, աստիճանավանդակ և տանիք կառուցելու նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Անդրանիկ Միշայի Զորանյանին ՝

1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2)կառուցապատման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 25
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2021թ. N 32-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 48-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 22-ի N 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2021 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝
1) ապահովել կիրառված արտոնության կատարումը.
2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановленная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 26
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021թ. N 33-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, հաշվի առնելով, որ բնակելի տունն ու պարիսպները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հիմք ընդունելով շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Արագ Անդրանիկի Վերդյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արագ Անդրանիկի Վերդյանի (ծնված՝ 1964 թվականի հունվարի 16-ին) կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի ձախակողմյան մասում գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող 0.014546 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-003-ից) ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության 190.8 քմ ներքին (219.91 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունը և 2.12 քմ մակերեսով պարիսպները ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականությունը:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի ձախակողմյան մասում գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 0.014546 հեկտար մակերեսով հողամասի (ծածկագիր՝ 07-003-ից) գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման:

3. 190.8 քմ ներքին (219.91 քմ արտաքին) մակերեսով բնակելի տունը և 2.12 քմ մակերեսով պարիսպները ճանաչել օրինական և կատարել պետական գրանցում՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող «ՔԱՂ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված բնակելի տան, պարիսպների և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

4.Բնակելի տանը, պարիսպներին և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 23/75:

5.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 27
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021թ. N 34-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, հաշվի առնելով, որ հասարակական սպասարկման օբյեկտը կառուցված չի Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և հիմք ընդունելով շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Նարեկ Վոլոդյայի Մխոյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նարեկ Վոլոդյայի Մխոյանի (ծնված՝ 1996 թվականի փետրվարի 12-ին) կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոցի ձախակողմյան մասում գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 0.007779 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-003-0028-ից) ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության 113.2 քմ ներքին (146.7 քմ. արտաքին) մակերեսով սպասարկման օբյեկտը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոցի ձախակողմյան մասում գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող 0.007779 հեկտար մակերեսով հողամասի (ծածկագիր՝ 07-003-0028-ից) գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով հասարակական կառուցապատման:

3. 113.2 քմ ներքին (146.7 քմ արտաքին) մակերեսով հասարակական սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական և կատարել պետական գրանցում՝ ըստ որոշման անբաժանելի մաս կազմող Տիգրան Լևոնյան անհատ ձեռնարկատիրոջ տված սպասարկման օբյեկտի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

4. Հասարակական սպասարկման օբյեկտին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 8/63:

5.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 27
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021թ. N 35-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 25-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 138-րդ և 139-րդ կետերի, հիմք ընդունելով Արթուր Շահինյանի ու Կարինե Հարությունյանի համատեղ դիմումը` *որոշում եմ.*

1.Արթուր Ազատի Շահինյանին և Կարինե Համբարձումի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված թիվ 87 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր` 07-051-0108-0007, վկայական N 26062018-07-0042) կառուցված բնակելի նպատակային նշանակության 2 (երկու) հարկանի բնակելի տան համար տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Արթուր Ազատի Շահինյանին և Կարինե Համբարձումի Հարությունյանին՝ համայնքապետարանի 900105202163 հաշվեհամարին վճարել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության ձևակերպման համար:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 27
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021թ. N 36-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ ու 49-րդ կետերի և հիմք ընդունելով Շահեն Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Շահեն Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղի անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-051-0020-0005, վկայական՝ 728507, տրված՝ 2002 թվականի մայիսի 24-ին) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 1-ին փողոց 5։

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 27
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021թ. N 37-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը, ***որոշում եմ.***

1.2021 թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 15-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման, 2020 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ և համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման տարեկան հաշվետվությունների ու «Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում», «Ջրաբեր բնակավայրի խմելու ջրի ներքին բաշխիչ ցանցի կառուցում» և ««Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության շենքի հիմնանորոգման աշխատանքներ» սուբվենցիայի ծրագրերի հանրային քննարկումներ:

2.Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի միջոցով՝ http://byureghavan-kotayk.am/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հունվարի 2021թ. N 38-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 26 ՇԵՆՔԻ 12 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Հակոբ Արտավազդի Ստեփանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 26 շենքի 12 բնակարանի (վկայական 0200486, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 12 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2021թ. հունվարի 29
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզը, համայնքը)

# ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

## (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N3 25 հունվարի 2021թ.

Օբյեկտ գոյություն ունեցող գրանցված խորդանոցին և բնակելի տանը կից հարթակներ աստիճանավանդակ և տանիք կառուցելու

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(համլիրում ընդգրկումը, հերթականությունը)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

«Աշխատանքային նախագիծ», (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան,

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան [illegible]ականի փողոց 7/55/2 (ծածկագիր՝ 07-003-0048-0021) հասցեի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գոյություն ունեցող գրանցված 67.57քմ մակերեսով խորդանոցին և 617.23քմ մակերեսով բնակելի տանը կից հարթակներ աստիճանավանդակ և տանիք կառուցելու

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Անդրանիկ Միշայի Չոբանյան (ք. Բյուրեղավան Երիտասարդական փողոց 23 շենք 21 բն.), հեռ.093006114

(բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական N26082020-07-0126.

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կառուցապատման հայտ, հողամասի հատակագիծ օբյեկտի առաջարկվող տեղադիրմամբ, էսքիզային նախագիծ, շինարարական կոնստրուկցիաների վիճակի վերաբերյալ տեխնիկական եզրակացություն

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը ______________________

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

*(աստղանիշով (*) նշված գրությունների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող անկոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է — Բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հատվածում
   (հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում,դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը — 0.075378հա. հող.,



(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը — գոյություն ունեցող գրանցված 67.57քմ մակերեսով խորդանոց և 617.23քմ մակերեսով բնակելի տուն
   (օբյեկտի բնութագիրը, շենքերի (այդ թվում` քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները — հարակից տարածքով անցնող համայնքային նշանակության ճանապարհ,
   (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

| | |
|---|---|
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | հարակից տարածքով անցնող ստորգետնյա էլեկտրամատակարարման համակարգեր, գազամատակարարման համակարգ<br>(նախատեսվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա) |
| 6. (*) Կից հողամասեր | Կից համայնքային սեփականության բնակավայրերի նպատակային նշանակության հող.<br>(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի) |
| 7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | ---------------<br>(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն) |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի, կառուցապատվող տարածքում սերվիտուտներ չկան<br>(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները) |

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող տեղանքի սխեմայով՝ Մ 1:500)*

| | |
|---|---|
| 9. Ճարտարապետահատակագծային պահանջներ | ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայմանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի, տանիքի գույնը RGB RAL 159-51-33 3016 49/31980 ՝ ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ<br>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ասյա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպված (կազմակերպվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից առաջադրվող պահանջներ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ) |
| 9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) | Պահպանել օրենքով սահմանված նորմերը |
| 9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) | պահպանել սահմանված ու նախագծային նորմերը |
| 9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) | սահմանային հարկայնության բարձրությունը փոխադարձելով շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն) Պարապետին -6,4մ , Կատարին -8,8-11,3մ |
| 9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) | մինչև 0,9 |
| 9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) | մինչև 90% |
| 9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%) | մինչև 10% |
| 9.7. այլ պահանջներ | տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ կառուցապատման վերաբերյալ |

ամբողջական տվյալներով, ________________

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը ________________

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները ________________

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախատեսվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
*համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ*

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերություն
(համապատասխան մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է «ՀԷՑ» ՓԲԸ «ԽՄՍ» տնօրինության «Նաիրի» էլեկտրական ցանցեր
(համապատասխան մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ
(համապատասխան մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է ________________
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակության տվյալների)

12.5. թույլ հոսանքներ ________________

12.6. աղբահանություն — Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — «Բյուրեղավան կանաչապատում և բարեկարգում» ՀՈԱԿ կազմակերպել ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը
(լանդշաֆտային կազմակերպման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, լուսավորում և այլն)

15. Շինարարական նյութեր — Քար, Երկաթ/բետոն, տուֆ, բազալտ, կոպտատաշ քարե շար. մետաղ, ապակի, փայտ, ալյում., թիթեղ և այլն ըստ համաձայնեցված նախագծի
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները ճակատների, ծածկերի, ցանկապատների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ — շինարարության ընթացքում ցանկապատել տարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ պաշտպանական միջոցներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — ՀՀ Քաղաքաշինության նախարարի 10.11.2006 թվականի ՀՀՇՆ IV-11.07.07-2006(ՍՆԻՊ 3.02-05-2003) <<Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար>> շինարարական նորմերի հաստատման մասին N253-Ն հրամանի պահանջներին համապատասխան

19. Շրջակա միջավայրի պահպանում — *չիրականացնել վնասակար միջոցառումներ, որը կթողնի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի*
(շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից պաշտպանող միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

*Ճանապարհի երթևեկելի մասում չառնչել երթևեկության խոչընդոտ հանդիսացող պայմաններ*

(առաջարկություններ շինարարության հետ կապված անհրաժեշտ աշխատանքների ծավալների, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

*«Էսքիզային նախագիծ» , 12 (տասներկու) ամիս*

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորությամբ՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

*Նախագիծը համաձայնեցնել Բյուրեղավանի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղադրման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքների սկսելը*

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հեռ. 0222 6 52 03

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2021 թվականի հունվարի 26 - ի N 32-Ա որոշման

# ՑԱՆԿ
# ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

## «ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՈՒՀ ՀՈԱԿ

| Հ/Հ | ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ | ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ |
|---|---|---|---|
| 1. | Ռեբեկա Ալեքսեյի Վենյամինովա | 20.09.2010թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 2. | Միլենա Ալեքսեյի Վենյամինովա | 03.04.2009թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 3. | Վանիկ Վահրամի Շահնազարյան | 15.07.2006թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 4. | Էմմա Վահրամի Շահնազարյան | 23.10.2008թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 5. | Էլեն Վահրամի Շահնազարյան | 23.03.2012թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 6. | Սուրեն Արմենի Ռոստոմյան | 26.02.2008թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 7. | Գարիկ Արմենի Ռոստոմյան | 25.07.2009թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 8. | Դավիթ Արմենի Ռոստոմյան | 02.02.2012թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 9. | Անահիտ Համլետի Բադիկյան | 26.01.2012թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 10. | Նոեմի Նվերի Չերքեզյան | 15.11.2003թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 11. | Լիա Նվերի Չերքեզյան | 09.12.2006թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 12. | Աշոտ Նվերի Չերքեզյան | 15.12.2005թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 13. | Միլենա Դավիթի Թադևոսյան | 13.11.2008թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 14. | Անի Միհերի Մուրադյան | 18.12.2006թ. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |
| 15. | Ալիսա Արմանի Բավեյան | 08.12.2006. | 50%<br>2021թ.-ի հունվարի 01-ից սկսած |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
(ՀՀ մարզը, համայնքը)

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N1 27 հունվարի 2021 թ.

Կառուցապատող __Արթուր Ազատի Շահինյանի,Կարինե Համբարձումի Հարությունյանի____
______(ք. Երևան Կասյան փողոց 3շ.37բն.), հեռ. 093383957____________________ կողմից
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված__բնակելի նպատակային նշանակության 2 (երկու) հարկանի բնակելի տունը________,
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Այգեգործական զանգված թիվ 87 (ծածկագիր՝ 07-051-0108-0007) հասցեի բնակելի կառուցապատման հողամաս______________________________ հասցեում՝
(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ _ընկերության (լիցենզիա՝ N 13389, տնօրեն՝ Ա. Անդրեասյան) կողմից.
(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է ____ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի _ կողմից
(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

տրված 08.08.2018 թ. N 09 և 06.08.2020թ.-ի N09-1 շինարարության թույլտվությունների համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է ___սեփականատիրոջ________ կողմից
(գլխավոր կապալառուի անվանումը)

_առկա է շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն_

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ __2 (երկու) հարկանի բնակելի նպատակային նշանակության բնակելի տուն______________________________

5. հատուկ պայմանները ____բնակելի տունը կառուցված է ոչ էական շեղումներով_____________

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը 25_01_ 2021 թ.
2) ընդունող հանձնաժողովի ակտը 25. 01. 2021թ.
3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 10 թերթ և 3 թերթ տեխնիկական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար

_______________ (ստորագրությունը) Հ. Բալասյան (անունը, ազգանունը)

Կ. Տ. Դ. Դանիելյան